

ՐՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

ԿԸԶ-Ն ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԴԵՆ ԳՐԱՆՅԵԼ Է 32 ԿՈՒՄԱԿՅՈՒԹՅՈՒՆ



Օգոստոսի 4-ի դրությամբ, ԿԸԶ-ն առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար գրանցել է 32 կուսակցություն:

Գրանցում են անցել «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» (ղեկավար՝ Գիորգի Կվիրիկաշվիլի), «Միասնական ազգային շարժում» (Սերգո Ռատիանի), «Ազատ ժողովրդավարներ» (Իրակլի Ալասանիա), «Լեյբորիստական կուսակցություն» (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԿՍՎԱԾ ԲՈԼՈՐ ԾՐԱԳՐԵՐԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԵՆ»

Քվենո Քարթլիում «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստանը» ներկայացրեց մեծամասնական պատգամավորության թեկնածուներին:



Կուսակցության նախագահ, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, օգոստոսի 3-ին, Ռուսթավիում ներկայացնելով պատգամավորության թեկնածուներին, հայտարարեց, որ կառավարությունը կշարունակի առողջապահության եւ սոցիալական, գյուղատնտեսության եւ գործարարության աջակցության, ենթակառուցային եւ մյուս նախագծերը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ

ԼՐԱՅՈՒՅԻՉ ԱԶԴԱԿ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ

Օգոստոսի 4-ին Թբիլիսիում անցկացվեց «Վրաստանի տնտեսական զարգացման» զագաթաժողովը, որի աշխատանքին մասնակցեցին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, երկրի օրենսդիր եւ գործադիր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, գործարար շրջանների, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները:

Իր խոսքում, վարչապետը նշեց, որ գոյություն չունի համընդհանուր տեսություն, եւ յուրաքանչյուր երկիր ինքն է մշակելու տնտեսական քաղաքականությունը: Նրա խոսքերով, սույն զագաթա-

ժողովն ընձեռում է հնարավորություն վերլուծելու, թե որ ուղղություններն են պահանջում առավել մեծ ուշադրություն

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀՐԱՏԱԿ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԴՅՈՒՐԱՑՄԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ԱՌԹԻՎ ՀԱՍՏԱՏԵՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ

Հուլիսի 31-ից կիրարկվեց օրենք, որը դյուրացնում է հողի գրանցումը եւ այն առավել մատչելի դարձնում քաղաքացիների համար:

Օրենսդրական փոփոխությունների հեղինակը Արդարադատության նախարարությունն է: Փոփոխությունների նպատակը այն բարդությունների վերացումն է, որոնք գրանց-

ման գործընթացում ծագում են հողի սեփականատերերի առջեւ: Օրենքի համաձայն, հողամասի գրանցման ընթացակարգը դյու-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ 8-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 8-ին կլրանա վրաց-ռուսական պատերազմի ութերորդ տարելիցը, բազում ասեկոսներով եւ թյուր մեկնաբանություններով հազեցված այդ իրադարձությունը մինչ օրս էլ գտնվում է լայն հասարակայնության ուշադրության կենտրոնում: Մենք փորձեցինք հանրագումարել այն բոլոր փաստերը, որոնք նախորդել էին մարտական գործողությունների սկզբին եւ վավերացվել դրանց կատարման ընթացքում եւ դրանից հետո:

Դեռեւս 2008 թվականի սկզբից Մոսկվայի, նրա խամաճիկային վարչակարգերի եւ Թբիլիսիի կողմից պարբերաբար հնչում էին փոխմեղադրանքներ իրավիճակի սրման փորձի եւ սադրանքի վերաբերյալ: Վրաց-ռուսական հարաբերություններն առանձնակի վատթարացան ՆԱՏՕ-ի Բուխարեստի

զագաթաժողովից հետո, որն անցկացվեց 2008 թվականի ապրիլի առաջին օրերին եւ այլապես անդամ պետությունների ղեկավարները հայտարարեցին, որ Վրաստանն անպայման կդառնա ՆԱՏՕ-ի անդամ: Այդ հայտարարությունն էլ Ռուսաստանի համար

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԱՎԵՐԱՅՎԵՑ ԵՐԿԿՈՐՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԸՆԹԱՅ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Օգոստոսի մեկին Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը մեկօրյա պաշտոնական այցով գտնվում էր Թբիլիսիում:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՎՐԱՅ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՅՆՄԱՆ ՀԱՐՅԵՐՆ ԷՆ

Օգոստոսի 1-ին Թբիլիսիում, նախագահական նստավայրում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Ողջունելով հյուրին, Վրաստանի նախագահն ընդգծեց, որ միշտ հաճելի է բարեկամ Հայաստանից բարձրաստիճան հյուրեր ընդունել եւ քննարկել երկու հարեւանների միջեւ բարիդրացիական հարաբերությունների առավել զարգացման հնարավորությունները:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ Էդվարդ Նալբանդյանը Վրաստանի նախագահին փոխանցեց Հայաստանի նախագահի ողջույններն ու բարեմաղթանքները եւ տեղեկացրեց Թբիլիսիում իր ունեցած հանդիպումների ու քննարկումների արդյունքների մասին:


Հանդիպման ընթացքում զրուցակիցները քննարկեցին վրաց-հայկական փոխգործակցության ընդլայն-



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՆԱԵՎ ՎԻՐԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ ՀՈՒԶՈՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Օգոստոսի 1-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին ընդունեց պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանին:



Ողջունելով հյուրին, Գիորգի Կվիրիկաշվիլին ասաց, որ գոհունակությամբ կարելի է նշել, որ, հիմնված երկու ժողովուրդների դարավոր բարեկամության վրա, երկու հարեւան երկրների միջեւ հարաբե-

րությունները վերընթաց զարգացում են ապրում, որոնց նպաստում են բարձրաստիճան փոխայցելությունները:

- Մենք անհանգստացած ու մտահոգված ենք Երեւանում վերջին ժամանակներում տեղի ունեցած իրադարձություններով եւ ողջունում ենք խաղաղ ուղիով իրավիճակի կարգավորումը, - հանդիպմանը հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԸՆԳՉՎԵՑ ԱՌԿԱ ՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՎԵԼԻ ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՎԱԴԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 1-ին Թբիլիսիում կայացավ Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեի եւ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումը:

Երկու երկրների արտգործնախարարները քննարկեցին Վրաստան-Հայաստան երկկողմ օրակարգի հարցերի լայն շրջանակ: Ընդգծվեց առկա ութսունից ավելի համաձայնագրեր ընդգրկող հարուստ իրավապայմանագրային դաշտի կարելիությունը, ինչը հնարավորություն է ընձեռում զարգացնել փոխգործակցությունը տարբեր բնագավառներում: Նախարարները

գոհունակությամբ արձանագրեցին, որ երկու երկրների գերատեսչությունների միջեւ շարունակվում են ակտիվ փոխայցելություններն ու արդյունավետ համագործակցությունը:

Քննարկվեցին Վրաստանի եւ Հայաստանի ԱԳՆ-ների միջեւ պարբերական խորհրդատվությունների անցկացման,

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Ծաբաթից շաբաթ. Փաստեր և իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ

ԼՐԱՅՈՒՅԻՉ ԱԶԴԱԿ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



ԳՈՐԾԱԴԻՐ

ԼԵՎԱՆ ԻՉՈՐԻԱՆ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ, ՔԵԹԵՎԱՆ ՖԻԽԵԼԱՇՎԻԼԻՆ՝ ՀԱՆՏԵՅՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ ՊԵՏՆԱԽԱՐԱՐ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 8-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների քարոզարշավին մասնակցելու համար, պաշտոնաթողության դիմում էին ներկայացրել Վրաստանի հանրապետական կուսակցության անդամներ պաշտպանության նախարար Թինա Նիդաշելին ու հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Պաստա Ջաբրիելի:

Վարչապետը բավարարել էր նրանց դիմումները: Օգոստոսի 1-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանրությանը ներկայացրեց պաշտպանության եւ հաշտեցման և քաղաքացիական իրավահավասարության գե-

րատեսչությունների նոր դեկլարաներին: Վարչապետի ներկայացմամբ, պաշտպանության նախարարի պաշտոնը կգթաղեցնի Լեւան Իգորիան, որը մինչ այդ հանդիսանում էր պետական անվտանգության ծառայության պետի տե-

ղակալը, իսկ քաղաքացիական իրավահավասարության պետնախարարի պաշտոնը վստահվել է Քեթևան Տիխելաշվիլին, որը մինչ այդ հանդիսանում էր այդ գերատեսչության



ղեկավարի առաջին տեղակալը:

ՏԱՐԱԾԱՆԵՐԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՓՈԿԱՅՈՒՄ, ԱՆԱԼՔԱԼՔԻՈՒՄ ԵՎ ՎԱՆԵՈՒՄ



Աշխատանքների ավարտից հետո առաջին անգամ Փոկայի բնակիչներին կտրվի անվճար համացանցով համակարգիչից եւ տեսաձայնագրական սարքից օգտվելու հնարավորություն: Տեղացիները կօգտվեն նաեւ գրադարանի թե նյութական եւ թե էլեկտրոնային գրքերից: Ինչ վերաբերում է արդի տեխնիկայով հագեցված խորհրդատվությունների դասիկին, ապա դրանից տեղի բնակիչներից բացի կարող են օգտվել նաեւ կենտրոնական եւ տեղական իշխանության քաղաքացիական հատվածի ներկայացուցիչները:

Հասարակական կենտրոնների շինարարության նախագծի շրջանակներում Նինոսիմոնայի մունիցիպալիտետի Փոկա գյուղի հասարակական կենտրոնում կավելացվեն գրադարանն ու խորհրդակցությունների դասիկը: Երեկ, օգոստոսի 5-ին Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին եղավ Փոկայի հասարակական կենտրոնում եւ տեղում ծանոթացավ ընթացող աշխատանքներին:

Հատկանշական է, որ Փոկայի հասարակական կենտրոնի գրադարանի աշխատակիցները Հասարակական սպասարկումների զարգացման գործակալության «Հանրային գրադարանների տեղական զարգացման համար» նախագծի շրջանակներում անցել են արդի գրադարանային սպասարկումների մատուցման եւ բազիսային համակարգչային ենթակառուցվածքի արդյունավետ մենեջմենտի իրականացման նախապատրաստությունը:

Նշենք, որ Փոկայի հասարակական կենտրոնի ընդլայնման որոշումը արդարադատության նախարարը ընդունել էր անցյալ տարվա հուլիսին, երբ նա փոկայի երիտասարդների եւ գերատեսչության աշխատակիցների հետ գտնվում էր Սվանեթում:

- Ազգությամբ հայ Վրաստանի այս երիտասարդ քաղաքացիները վրաց լեզվի ուսուցման զարմանալի միտում ունեն, ինչը նրանց շնորհի ու վրաց լեզվի ուսուցչու-

հի, տիկին Կարա Փոցիվերաշվիլու ծանայությունն է: Ուստի եւ մենք այս երեխաներին խոստացանք, որպեսզի այդ միտումը իրատեսության վերածվի այնպիսի ենթակառուցվածքի կառուցման, ինչպիսին արդեն վերջին չորս տարվա ընթացքում արել ենք 30-ից ավելի Վրաստանի գյուղերում,- ասաց Թեա Ծուլուկիանին: Թեա Ծուլուկիանին եղավ նաեւ Ախալքալաքիում եւ Վալեում, որտեղ ծանոթացավ հասարակական կենտրոնի շինարարական ընթացքին:



ՔՐԵԱԿԱՆ

ՆԱՐԴԵՎԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՐԱՅՏՎԵՑ ԹԱՐՄ ՀԵՏՔԵՐՈՎ

Ներքին գործերի նախարարության Քվենո Քարթլիի ոստիկանության ղեկավարամետի աշխատակիցների թարմ հետքերով իրականացրած օպերատիվ եւ հետաքննչական միջոցառումների արդյունքում, Ծալկայի շրջանի Նարդեան գյուղում կանխամտածված սպանության մեղադրանքով ձերբակալեցին 1982 թվականին ծնված Անդրանիկ Թամարյանին եւ կանխամտածված սպանության փորձի մեղադրանքով՝ 1955 թվականին ծնված Հայկ Մելտոնյանին: Ասենք, որ Հայկ Մելտոնյանը 2003-2008 թվականների գումարման Վրաստանի խորհրդարանի անդամ էր, իսկ Անդրանիկ Թամարյանը՝ Ծալկայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավոր Սամսոն Թամարյանի որդին:

Հետաքննությամբ պարզվեց, որ Անդրանիկ Թամարյանը անձնական դիմակայության պատճառով վիճաբանության ժամանակ


«Վինչեստր» մականիշի որսորդական հրացանով մահացու վերք է հասցրել 1993 թվականին ծնված Անդրանիկ Մելտոնյանին եւ թաքն-

վել դեպքի վայրից: Անդրանիկ Մելտոնյանը տեղում մահացել է: Այդ ընդհարման ժամանակ Անդրանիկ Մելտոնյանի հորեղբայր Հայկ Մելտոնյանը, «Մակարով» մականիշի հրազենից վիրավորել է 1961 թվականին ծնված Սամվելին Անդրանիկ Թամարյանի հորեղբորը եւ թաքնվել դեպքի վայրից: Ներկա դրությամբ, վիրավորվածի առողջական վիճակը կայուն է: Իրավապահները Անդրանիկ Թամարյանին եւ Հայկ Մելտոնյանին ձերբակալեցին մի քանի րոպե անց նրանց բնակելի տան

մտակալքում: Ոստիկանությունը Անդրանիկ Թամարյանի բնակելի տան խուզարկության եւ Հայկ Մելտոնյանի անձնական խուզարկության ժամանակ որպես նյութական ապացույց առգրավել է հրազենը: Հետաքննությունը տարվում է կանխամտածված սպանության եւ կանխամտածված սպանության փորձի փաստով: Ինչպես տեղեկացրել է «Կավկասպրես» գործակալությունը, Ծալկայի շրջանի Նարդեան գյուղում տեղի ունեցած միջադեպից հետո, անվտանգության պահպա-

նության նպատակով, հերթապահում են պարեկային մի քանի անձնակազմեր: Նրանք պահպանում են Սամսոն Թամարյանի տունը: Սպանված 23-ամյա Անդրանիկ Մելտոնյանին հուղարկավորեցին օգոստոսի 3-ին: Թամարյանների փաստաբանը «Ռուսթավի 2» հեռուստաընկերությանը հայտարարեց, որ կասկածի տակ է առել հետաքննության որակավորումը եւ մշեց, որ կրակոցի պահին կրտսեր Թամարյանը պաշտպանվում էր:

ԱՐԵՎԻԿԱ ՍԱՆՈՒԿՅԱՆ



ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՆԻ ԵՐԿՈՒ ՆՈՐ ՏԵՂԱԿԱԼ

Օգոստոսի 2-ին Թբիլիսիի սակրեբուլոն հաստատեց մայրաքաղաքի քաղաքապետի երկու նոր տեղակալների թեկնածությունները: Փոխքաղաքապետեր են ընտրվել Գիգա Նիկոլեիշվիլին եւ Նատո Քիտիաշվիլին:

Մինչ այդ, Նատո Քիտիաշվիլին գլխավորում էր Թբիլիսիի քաղաքապետարանի իրավաբանական ծառայությունը, իսկ Գիգա Նիկոլեիշվիլին մայրաքաղաքի կառավարության աշխատակազմի ղեկավարն էր: Վերոնշյալ թեկնածուներին սակրեբուլոյին ներկայացրեց Թբիլիսիի փոխքաղաքապետ Իրակլի Լեքվինաձեն:

ՆԵՐՈՒՄ՝ 226 ԲԱՆՏԱՐԿՅԱԼ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ստորագրել է 226 բանտարկյալի ներման հրամանագիրը:

Ինչպես հայտարարեց ներման պետական հանձնաժողովի նախագահ Ջվիադ Քորիձեն, ներման արժանացածների թվում 11 կին է եւ երեք անչափահաս: 226 բանտարկյալներից 154-ը անմիջականորեն ազատ են արձակվում, իսկ մնացած 72-ի պատժաժանվետը կրճատվում է:

Ջվիադ Քորիձեի խոսքերով, ներկա փուլում հանձնաժողովը քննարկել է ներման 1565 գործ:

100 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ՄՈՒՆԻՅԻՊԱԼԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՆՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնարկի գործադիր տնօրեն Ջուանչեր Բուրժուլաձեն հանդիպում ունեցավ Եվրոպայի ներդրումային բանկի ներկայացուցիչներ Յոհանես Բիստրոնի, Ջորջի Կաուցիանի եւ Ալեքսանդր Վիկունի հետ:

Կողմերը քննարկեցին անցյալ տարի իրականացված համատեղ ծրագրերը եւ կանխագծեցին առաջիկա համագործակցության ծրագրերը:

Վրաստանը Եվրոպայի ներդրումային բանկից լրացուցիչ կստանա 100 միլիոն եվրո, որը նախատեսված է երկրի մունիցիպալային ենթակառուցվածքի զարգացման համար:

Կողմերը ծրագրում էին նաեւ քննարկել տարածաշրջանում իրականացվելիք նախագծերը, որոնք ֆինանսավորվում են Եվրոպայի ներդրումային բանկի կողմից «Վրաստանի քաղաքաշինության վերակառուցման եւ զարգացման ծրագիր» նախագծի շրջանակներում:

